ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/116

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Լեյկո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Դ. Հովսեփյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, դիմակների և ախտահանիչ միջոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6334-2021 գրությամբ «Լեյկո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.04.2021թ.-ի թիվ 1/18-2/24285-2021 գրության հիման վրա, 26.04.2021թ.-ին «Լեյկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 26.04.2021թ.-ին:

27.04.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/116 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

04.05.2021թ.-ին և 26.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.05.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 23.04.2021թ.-ի թիվ 1/18-2/24285-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

- *Ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված չի եղել ընկերության պետաիրավական տեսակը (ՍՊԸ, ՓԲԸ և այլն), ռուսերեն լեզվով անվանումը, ինչպես նաև վերոնշյալ Հավելված 1-ի 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է եղել «Գագիկ Ալեքսանյան» անունը,*

- *Ներկայացված չի եղել սահմանված կարգով լրացված և հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):*

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի 14.04.2021թ-ին «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն, սահմանված ժամկետում շտկումը կատարվել է մասնակի՝ շտկվել է Հավելված 1-ը, իսկ Հավելված 1.1-ը կրկին չի ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետի պահանջներով, ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն թվականի ապրիլի 16-ի որոշմամբ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լեյկո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.04.2021թ.-ին գրությամբ դիմել է «Լեյկո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6334-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 03.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

««ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից 26.04.2021թ.-ին նախաձեռնվել է թիվ ՍՅ-ԼՕ-2021/116 ընթացակարգը:

Ծանոթանալով ընթացակարգի նախաձեռնող ՀՀ ֆինանսների նախարարության և ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի պատվիրատու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ձեզ ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացնում ենք սույն առարկությունը և գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2021/116 ընթացակարգը ենթակա է մերժման համաձայն ներքոնշյալ փաստական և իրավական հիմքերի ու հիմնավորումների:

1) ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից նույն ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը հաստատվել են նույն հանձնաժողովի 31.03.2021թ.-ի թիվ 1 որոշմամբ: ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերն ու հայտարարությունը տեղեկագրում www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, հրապարակվել են 31.03.2021թ.- ին:

Հրապարակված հրավերի «Գնման առարկայի բնութագիրը» վերտառությամբ 1-ին մասի 1.1 կետի համաձայն գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «դիմակների և ախտահանիչ միջոցների» ձեռքբերումը, որոնք խմբավորված են «3» չափաբաժնում՝

Չափաբաժիեերի համարները	*Չափաբաժեի անվանումը*
1	*դիմակ*
2	*հականեխիչ (անտիսեպտիկ) — ախտահանիչ միջոցներ 1*
3	*հականեխիչ (անտիսեպտիկ) — ախտահանիչ միջոցներ 2*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

(….)

14) տեղեկագիր՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք:

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումների պլանը, ներառյալ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ Կարգ) 4-րդ կետի համաձայն գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (....):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնումների գործընթացի կազմակերպման և իրականացման պարտադիր փուլերից մեկը գնումների պլանավորումն է, որպիսի պրոցեսին ևս ներկայացվում են մի շարք իմպերատիվ պահանջներ: Մասնավորապես, գնումների պլանը, ներառյալ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի, և միայն սահմանված կարգով հրապարակված գնումների պլանի առկայության դեպքում է համարվում, որ առկա է գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը, այլ կերպ կազմակերպված գնման գործընթացն իրավաչափ է, եթե առկա է սահմանված կարգով հրապարակված գնումների պլան: Իր հերթին, պետական գաղտնիք չպարունակող գնումների պլանի հրապարակման օրը հանդիսանում է գնման պահանջի ծագման օր, և միայն այդ օրվանից սկսած պատվիրատուն իրավունք ունի կազմակերպելու համապատասխան գնման գործընթաց:

Վերոգրյալից հետևում է, որ պետական գաղտնիք չպարունակող գնումների պլանի սահմանված կարգով հրապարակված չլինելու պայմաններում կազմակերպված գնման գործընթացն ի սկզբանե իրավաչափ չէ, հակասում է Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 16-րդ և 17-րդ կետերի պահանջներին, և, որպես այդպիսին, այն չի կարող գնման գործընթացին մասնակցած անձի համար առաջացնել բացասական հետևանքներ, այդ թվում մասնակցին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու տեսքով:

Ընկերության վերոգրյալ դիրքորոշումները բխում են ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 12.04.2021թ.-ի թիվ ՍՑ-ՆԳ-2020/76 որոշման և բազմաթիվ այլ որոշումների մեջ արտահայտված դիրքորոշումներից: Նշված և բազմաթիվ այլ որոշումներով, հաշվի առնելով կազմակերպված գնման ընթացակարգի իրավական հիմքի բացակայությունը, այդպիսի ընթացակարգի կազմակերպման ոչ իրավաչափ լինելը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը մերժվել են: Գտնում ենք, որ սույն գործով ևս առկա է նույնական իրավիճակ, և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/116 ընթացակարգը ենթակա է մերժման:

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի պատվիրատու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տեղեկագրում www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, 2021 թվականին նախատեսված գնումների պլանի մասով կատարվել է թվով 5 հրապարակում 11.01.2021թ.-ին, 15.01.2021թ.-ին, 22.01.2021թ.-ին, 26.04.2021թ.-ին և 29.04.2021թ.-ին (հրապարակումները pdf ֆորմատով կցվում են սույն առարկությանը):

11.01.2021թ.-ին հրապարակվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2021թ.-ի գնումների պլանը: 15.01.2021թ.-ին և 22.01.2021թ.-ին կատարված հրապարակումների համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի գնումների պլանում: 11.01.2021թ.-ին, 15.01.2021թ.-ին և 22.01.2021թ.-ին հրապարակված գնումների պլանում ու դրանց փոփոխություններից և ոչ մեկում գնման համար նախատեսված ապրանքների ցանկում ներառված չեն ՊԵԿ-ԷՍՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի հրավերով հայցվող ապրանքները դիմակը և հականեխիչ (անտիսեպտիկ)-ախտահանիչ միջոցները:

Վերոնշյալ ապրանքները դիմակ և հականեխիչ (անտիսեպտիկ)-ախտահանիչ միջոցները, նախատեսվել են արդեն 26.04.2021թ.-ին և 29.04.2021թ.-ին հրապարակված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի գնումների պլանում փոփոխություններ նախատեսող հրապարակումներում (տե ս այդ հրապարակումների 5-րդ էջերում):

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել են 31.03.2021թ.-ին, այսինքն այն ժամանակ, երբ վերոգրյալ իրավանորմերի համաձայն գնման պահանջը չէր համարվում ծագած, և առկա չէր գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը: Հետևաբար, նման պայմաններում կազմակերպված գնման գործընթացը ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը, ի սկզբանե իրավաչափ չի եղել, և դրանից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, և չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2) Վերոգրյալից բացի, անդրադարձ կատարենք նաև Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառելու համար էական նշանակություն ունեցող մեկ այլ հանգամանքի:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավանորմերից ելնելով, արձանագրելով, որ գնումների հետ կապված իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական նորմերով կարգավորվող իրավահարաբերություններ են, և որ գնումների մասին օրենսդրությունը բաղկացած է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, կարող ենք վստահաբար արձանագրել, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը գնումների գործընթացում այդ մասնակցի ստանձնած պարտավորություններից է, որի խախտումը նախ հանգեցնում է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ապա հանգեցնում է յուրօրինակ պատասխանատվության տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու: Ինչ վերաբերում է մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտման համար նշված պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերին, ապա այս դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոգրյալ իրավանորմերով, և հատկապես նույն օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն որոնց պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է անձի մեղքի առկայությունը, հետևաբար գնման գործընթացի մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտման համար վերոնշյալ պատասխանատվության միջոցը կարող է և պետք է կիրառվի միայն տվյալ մասնակցի մեղքի առկայության դեպքում: Այն դեպքերում, երբ առկա չէ գնման գործընթացի մասնակցի մեղքը, այն կերպ երբ վերջինս գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, ապա տվյալ դեպքում բացակայում է գնման գործընթացի մասնակցի մեղքը, հետևաբար Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված վերոնշյալ պատասխանատվության հիմքը: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իր 16.04.2021թ.-ի թիվ ՍՑ-ԼՕ-2021/74 որոշման մեջ, որով մերժել է

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

Սույն գործով ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և Ընկերությանը առաջարկել մեկ աշխատանքային օրվա մեջ շտկել նույն արձանագրության մեջ ֆիքսված, էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությանը (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրին (Հավելված 1.1) վերաբերող անհամապատասխանությունները:

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշման Ընկերության ներկայացրած փաստաթղթերում շտկումներ կատարելու մասին, Ընկերությունը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել 14.04.2021թ.-ին, ժամը 10:12-ին noreplay@eauction.armeps.am էլեկտրոնային փոստից leykoalex@gmail.com էլեկտրոնային փոստին ուղարկված նամակով (էլեկտրոնային փոստից կատարված արտատպումը կցվում է սույն առարկությանը): Մինչդեռ, համաձայն Կարգի 41-րդ կետի, Ընկերությունը արձանագրված անհամապատասխանությունների մասին պետք է էլեկտրոնային եղանակով ծանուցվեր գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցնելու մասին որոշման ընդունման օրը, այսինքն 12.04.2021թ.-ին: Քննարկվող դեպքում ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջները:

Այդուհանդերձ, ստանալով վերոնշյալ ծանուցումը նույն օրը 14.04.2021թ.-ին, Ընկերությունը շտկել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությանը (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրին (Հավելված 1.1) վերաբերող գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները, որին հաջորդել է դրանց բեռնումը eauction.armeps.am համակարգ: Սակայն, հաշվի առնելով, որ Ընկերությունն առաջին անգամ է մասնակցում էլեկտրոնային աճուրդի, և քաջատեղյակ չէ eauction.armeps.am համակարգի «նրբություններից», տեխնիկական սխալի արդյունքում անհրաժեշտ փաստաթղթերից համակարգ է մուտք եղել միայն մեկը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իսկ մյուսը առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), չի բեռնվել այն պատճառով, որ համակարգը թույլ է տվել բեռնել ընդամենը մեկ էլեկտրոնային փաստաթուղթ (ֆայլ):

էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) հենց նույն օրը 14.04.2021թ.-ին, շտկվել են, ինչի մասին են վկայում նաև 14.04.2021թ.-ին այդ փաստաթղթերի վրա դրված էլեկտրոնային ստորագրությունները (էլեկտրոնային տարբերակները կցվում են վկայակոչված փաստը հաստատելու համար):

Թերությունների վերացման առաջարկի Ընկերության կողմից թերի կատարումը հետևանք է եղել eauction.armeps.am համակարգի տեխնիկական հնարավորություններից ոչ ամբողջական տեղեկատվություն ունենալու և նաև այն հանգամանքի, որ տվյալ պահին համակարգը որևէ կերպ որևէ զգուշացում չի տվել առ այն, որ հնարավոր է ներբեռնել ընդամենը մեկ ֆայլ, որը ենթադրաբար կպարունակի պահանջվող երկու էլեկտրոնային փաստաթղթերը միաժամանակ, այլ կերպ ասած կլինի zip ֆորմատով: Նույն կերպ այդ մասին որևէ տեղեկատվության չկա www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցներում:

Վերոնշյալ հանգամանքների մասին Ընկերությունը գրավոր տեղեկացրել է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերջինիս ուղղված 16.04.2021թ.-ի դիմումով (սկանավորված տարբերակը կցվում է), որին կցվել են նաև էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) 14.04.2021թ.-ին կատարված էլեկտրոնային ստորագրություններ պարունակող էլեկտրոնային տարբերակները: Այդուհանդերձ, Ընկերության ներկայացրած փաստարկները գնահատող հանձնաժողովի կողմից հիմք չեն ընդունվել և արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

Ըստ էության, թերությունների վերացման առաջարկի Ընկերության կողմից թերի կատարման մեջ բացակայում է վերջինիս մեղքը, քանզի վերջինս ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները արձանագրված թերությունները շտկելու և գնման գործընթացի շրջանակներում իր ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու համար: Հետևաբար, սույն գործով բացակայում է Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառման հիմքերից մեկը Ընկերության մեղքը, ուստի նշված պատասխանատվության միջոցի կիրառման նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման:»:

Մասնակիցը 05.05.2021թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«04.05.2021թ.-ին տեղի ունեցած նիստում Ձեր կողմից նարց է բարձրացվել առ այն, թե ինչպես է ստացվել, որ Ընկերությունը ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելիս կարողացել է համակարգ ներբեռնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1), իսկ շտկման տողում չի կարողացել, այնուհետև նշեցիք, որ համաձայն ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ.-ի թիվ 2 արձանագրության Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրն (հավելված 1.1) առհասարակ չի ներկայացվել:

Վերոգրյալի առնչությամբ անհրաժեշտություն է առաջացել մեր կողմից որոշակի պարզաբանումներ տրամադրելու:

eauction.armeps.am համակարգի միջոցով ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնելիս eauction.armeps.am համակարգում համակարգչային էկրանին ակտոմատ կերպով արտացոլվել է միայն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (հավելված 1), որը Ընկերության կողմից լրացվել էր թերություններով, իսկ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1) սկզբնապես չի ներկայացվել, քանզի eauction.armeps.am համակարգում համակարգչային էկրանին այն արտացոլված չի եղել, և համակարգչային էկրանին բացված պատուհաններով հնարավոր չի եղել գտնել դրա էլեկտրոնային տարբերակը, լրացնել այն և էլեկտրոնային եղանակով ստորագրել, ինչով պայմանավորված էլ ԷԱՃԱՊՁԲ-21/014 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ ընդունված որոշմամբ Ընկերությանն առաջարկվել է շտկել անհամապատասխանությունները, այլ կերպ ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1): Ընկերությունը հիշյալ աճուրդին դիմելու սկզբնական փուլում էլ տեղյակ չի եղել, որ eauction.armeps.am համակարգը հնարավորություն չի տալիս ներբեռնելու մեկից ավելի ֆայլեր: Շտկման փուլում ևս այդ մասին որևէ զգուշացում eauction.armeps.am համակարգը չի պարունակել, դրա մասին որևէ տեղեկատվություն առկա չի եղել նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Օրենսդրության» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցներում, հետևաբար տեղի ունեցածը որևէ դեպքում չի կարող որակվել որպես Ընկերության մեղավոր վարքագիծ՝ ուղղված գնման գործընթացում ստանձնած պարտավորությունների խախտմանը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դիմակների և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 31.03.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լեյկո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված չէ վերջինիս պետաիրավական տեսակը (ՍՊԸ, ՓԲԸ և այլն) և ռուսերեն լեզվով անվանումը, նույն հավելվածի երկրորդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է «Գագիկ Սկեկսանյան» անունը, ինչպես նաև «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

v. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Լեյկո» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.04.2021թ.-ին noreplay@eauction.armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների

շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի leykoalex@gmail.com և leykofarm@rambler.ru էլ. փոստի հասցեներին:

vii. Հանձնաժողովի 16.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից, ծանուցմամբ սահմանված ժամկետում, չի շտկվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1-ը):

viii. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և 42-րդ կետերով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6334-2021 գրությամբ «Լեյկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի

թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից դիմակների և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 31.03.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերով սահմանվում են այն դեպքերը, երբ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և

պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխա-

նություններ արձանագրելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից դիմակների և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 31.03.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված չէ վերջինիս պետաիրավական տեսակը (ՍՊԸ, ՓԲԸ և այլն) և ռուսերեն լեզվով անվանումը, նույն հավելվածի երկրորդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է «Գագիկ Սկեկսանյան» անունը, ինչպես նաև «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Լեյկո» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից, միայն 14.04.2021թ.-ին noreplay@eauction.armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի leykoalex@gmail.com և leykofarm@rambler.ru էլ. փոստի հասցեներին: Սակայն «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից, ծանուցմամբ սահմանված ժամկետում, չի շտկվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1-ը), ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են, որ մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ քարտուղարի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասին մասնակցի ծանուցումն նույն օրը ուղարկելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես

հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից դիմակների և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/014» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունների արձանագրման նույն օրը՝ 12.04.2021թ.-ին ծանուցում չի ուղարկվել, այլ ուղարկվել է միայն 14.04.2021թ.-ին, ինչը չի բխել Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է,

որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Լեյկո» ՍՊԸ-ն ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ ուղղված արձանագրված անհամապատասխանությունները շտկելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջների խախտմամբ՝ կետանցմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6334-2021 գրությամբ «Լեյկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/116 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**